ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2025

ՏԵՔՍՏԻԼ

ԹԵՍՏ 3

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 **Ո՞ր չափումների հիման վրա է որոշվում մանկական հագուստի չափը:**

1) թևքի երկարություն, գոտկատեղի շրջագիծ
2) մեջքի երկարություն, վզի շրջագիծ
3) կոնքի շրջագիծ, արտադրանքի երկարություն
4) հասակ, կրծքի շրջագիծ

2 **Նշվածներից ո՞րն է օձիքի տեսակ՝ ըստ ձևվածքի դասակարգման:**

1) ալիքաձևը
2) ուղղանկյունաձևը
3) կոնաձևը
4) շալաձևը

3 **Ե՞րբ և որտե՞ղ է առաջացել նորաձևություն հասկացությունը:**

1) 12 -րդ դարում Ֆրանսիայում
2) 20-րդ դարում Անգլիայում
3) 16-րդ դարում Իտալիայում
4) 4 -րդ դարում Բյուզանդիայում

4 **Ո՞ր կարատեսակով են իրար միացվում վերևի և ներքևի օձիքները:**

1) վրադիր կարով
2) փականք կարով
3) շրջակարով
4) զարդակարով

5 **Ի՞նչ ջերմախոնավային մշակում է անցնում գործվածքը՝ ձևելուց առաջ:**

1) հարթեցում
2) դեկատիրովկա
3) նստեցում
4) լայնացում

6 **Ո՞ր նյութը *չի* օգտագործվում դասական բաճկոնի լանջափեշատակի (подборт) միջնադիր շերտի համար:**

1) Սոսնձային
2) Սինտեպոն
3) Քաթան (холст)
4) Ֆլիզելին

7 **Ընտրեք պատկերների և տրված կարատեսակների ճիշտ համապատասխանեցված տարբերակը:**



1. ռելիեֆային վրակարված
2. դարսեր (պարզ միացնող)
3. շրջակար պարզ շրջանակով
4. կանթով միացման կար
5. ծալով կար աստառի հետ միացված

1) Ա1, Բ4, Գ5
2) Ա4, Բ5, Գ1
3) Ա5, Բ2, Գ3
4) Ա3, Բ1, Գ2

8 **Տրված մանրաթելերից ո՞րն է համարվում սինթետիկ:**

1) վիսկոզը
2) ացետատը
3) վուշը
4) պոլիեսթերը

9 **Ո՞ր համարի ասեղներ են օգտագործվում նուրբ գործվածքների համար:**

1) 120-140
2) 100-120
3) 90-100
4) 60-75

10 **Ինչպիսի՞ն են լինում մեքենաները՝ կախված թելի հյուսման եղանակից:**

1) մեկ և երկու գլխիկանի
2) երկու ասեղանի
3) մաքոքային և շղթայական
4) ավտոմատ և կիսաավտոմատ

11 **Ի՞նչ է օվերլոքը:**

1) կոճակներ կարելու մեքենա
2) գործվածքի եզրերը մաքրակարելու մեքենա
3) դեկորատիվ կարեր կարելու մեքենա
4) ասեղնագործության մեքենա

12 **Ո՞ր չափումներն են անհրաժեշտ կանգունակ օձիք ստանալու համար:**

1) վզատեղի փորվածքի երկարություն, օձիքի բարձրություն
2) օձիքի լայնություն, առաջամասի փորվածք
3) վզի շրջագիծ, օձիքի երկարություն
4) հետևամասի վզի երկարություն, օձիքի բարձրություն

13 **Ո՞րն է կարի մեքենայի մաքոքի (шпулька) հիմնական ֆունկցիան:**

1) ներքևի թելի մատակարարումը
2) կտորի տեղաշարժի ապահովումը
3) վերին թելի մատակարարումը
4) կարի արագության կարգավորումը

14 **Նշվածներից որ՞ն է նպաստում հագուստի որակի բարելավման գործընթացին:**

1) կարի նախապատրաստման ժամանակի ավելացում
2) էժան նյութերի օգտագործում
3) որակի վերահսկողություն յուրաքանչյուր փուլում
4) կարի արագության բարձրացում

15 **Ի՞նչ է ISO-ն**

1) որակի կառավարման միջազգային ստանդարտ
2) տեխնոլոգիական գործընթացի փաստաթուղթ
3) ընկերության ֆինանսական հաշվետվություն
4) կարի մեքենայի անվանում

16 **Ո՞ր կարով *չենք* կարող միացնել հագուստի ուսային և կողային կտրվածքները:**

1) շրջակարով
2) փականք կարով
3) ներկարով
4) վրադիր կարով

17 **Որո՞նք են տրիկոտաժե գործվածքների առավելությունները:**

1) առաձգականություն (эластичность)
2) ջրակայունություն
3) բարձր խտություն և կոշտություն
4) չձգվելու հատկություն

18 **Ի՞նչ է հագուստի հիմքի գծագիրը:**

1) ընտրված մոդելի ձևված տարբերակը
2) ձևաթուղթ՝ գործվածքը ձևելու համար
3) գծագրի տարբերակ՝ առանց ավելացումների և լրացուցիչ մանրամասների
4) գծագիր, որը ծառայում է որպես հիմք տարբեր ոճերի մոդելավորման համար

19 **Ո՞րն է կարի արտադրության պլանավորման հիմնական փուլը:**

1) արտադրանքի տեսականու և արտադրության ծավալի որոշում
2) մարքեթինգային հետազոտությունների անցկացում
3) նյութերի գնում
4) տեխնոլոգիական գործընթացի մշակում

20 **Հագուստի պատրաստման ո՞ր փուլում *չի* կիրառվում ջերմախոնավային մշակումը:**

1) սոսնձային միջնադիրների ամրացման փուլում
2) վերջնական հարդարման փուլում
3) գործվածքը կտրելուց առաջ
4) հագուստի կտրվածքների միացման փուլում

21 **Տրված մանրաթելերից 3-ն ունեն օրգանական ծագում: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Լատեկսը
2. Ասբեստը
3. Վիսկոզան
4. Բուրդը
5. Նեյլոնը
6. Մետաքսը
7. Պոլիեստերը
8. Լավսանը
9. Դուբլերին

22 **Տրվածներից 3-ը հագուստի հարդարող մանր մասնիկներ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Ուսադիրը
2. Սեղմոնը
3. Երեսացուն
4. Ռելիեֆը
5. Կոկետկան
6. Գլխանոցը
7. Գրպանը
8. Բազկակալը
9. Թևը

23 **Տրված պնդումներից 3-ը սխալ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Ստանդարտացումը չի նպաստում արտադրանքի անվտանգությանը:
2. Գործվածքի կառուցվածքը հենքաթելի և միջնաթելի փոխադարձ դասավորությունն է:
3. Կարերի մեջ գտնվող գրպանի մշակման համար օգտագործվում է գունաշերտ:
4. Տոգան՝ հին Հռոմում տղամարդու թիկնոց է:
5. Տեխնիկական մոդելավորումը գծագրի հիմքի փոփոխություն է:
6. Կամրջակը կարվում է միայն սոսնձային գործվածքից:
7. «Տեխնոլոգիական հաջորդականություն» հասկացության էությունը հագուստի պատրաստման գործողությունների ճշգրիտ հերթականությունն է:
8. Մանրաթելերը լինում են բնական, քիմիական և ֆիզիկական:
9. Նորաձևությունը խթանում է թեթև արդյունաբերության զարգացմանը:

24 **Տրվածներից 3-ը տեխնիկական մոդելավորման եղանակներն են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Գեղարվեստական էսկիզավուրում
2. Հիմքի փոփոխություն
3. Տեխնիկական էսկիզավորում
4. Գոտկատեղի գծի տեղափոխում
5. Սեղմոնների տեղափոխում
6. Հիմքի լայնացում
7. Սեղմոնների երկարեցում
8. Կոմբինացված ձևափոխում
9. Ռելիեֆների երկարացում

25 **Տրվածներից 3-ը նշվում են ձևաթղթերի (լեկալների) վրա: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Դետալների քանակը
2. Արտադրանքի քանակը
3. Արտադրանքի անվանումը
4. Գործվածքի երկարությունը
5. Սեղմոնների հաշվարկը
6. Հենքաթելի ուղղությունը
7. Գործվածքի թափոնների չափը
8. Հագուստի ոճը
9. Գծագրի լայնքը

26 **Տրվածներից 3-ը դասվում են ոչ հյուսված տեքստիլ նյութերի շարքին: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Պիկե
2. Արհեստական կաշի
3. Փարչա
4. Քեչա
5. Ռիբանա
6. Ժակկադ
7. Սինտեպոն
8. Տավիշ
9. Շիֆոն

27 **Տրվածներից 3-ը մտնում են մեքենակարերի դասակարգման աղյուսակի մեջ: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Միացման կարեր
2. Եզրային կարեր
3. Հանդիպակաց կարեր
4. Կցակարեր
5. Հարդարման կարեր
6. Կոկետկայի կարեր
7. Բլանդակարեր
8. Շուլալակարեր
9. Ծալքերի կարեր

28 **Տրվածներից 3-ը հագուստի հիմնական ոճերն են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Նյու լուքը
2. Բոհո
3. Ռոմանտիկը
4. Պրեպպին
5. Դասականը
6. Հիպպին
7. Մինիմալիզմը
8. Լամբերը
9. Սպորտայինը

29 **Տրված 3 ցուցանիշներով գնահատվում է արտադրանքի անվտանգությունը: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Գիգրոսկոպիկ
2. Կենսաբանական
3. Սոցիալական
4. Նյութական
5. Մեխանիկական
6. Քիմիական
7. Արտադրական
8. Ֆիզիկական
9. Բժշկական

30 **Տրվածներից 3-ը չափագիտության բաղադրիչներ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Տնտեսական
2. Մեխանիկական
3. Նյութական
4. Սոցիալական
5. Արտադրական
6. Հիմնարար (տեսական)
7. Օրենսդրական
8. Շուկայական
9. Գործնական (կիրառական)